ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 37-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 43-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածով և հիմք ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 43-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն, N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022թվականի հուլիսի 1-ից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐՄԱՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՍԵՎԱԴԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՐԳԱՄ

ՂՈՒԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՐԱԳԱԾ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՐՋՈՅԱՆ ԱՐԱՄ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի
ավագանու 2022 թվականի հունիսի 23-ի
N 37-Ա որոշման

<<ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի
ավագանու 2019 թվականի դեկտեմբերի
27-ի N 43-Ա որոշման

<<ՀՀ Սյունիքի մարզի Տեղի թիվ 1 նախադպրոցական հաստատություն>> ՀՈԱԿ

	Պաշտոնը	Հաստիքների քանակը	Աշխատողների թիվը	Դրույքի չափը	Գումարը
1	Տնօրեն	1	1	120000	120000
2	Մեթոդիստ	1	1	110000	110000
3	Հաշվապահ	1	1	105000	105000
4	Դաստիարակ	5.6	10	110000	616000
5	Դաստիարակի օգնական	4	4	88312	353248
6	Դաստիարակի օգնական	1	1	91275	91275
7	Երաժիշտ	1	1	108000	108000
8	Բուժքույր	1	2	108000	108000
9	Խոհարար	1	1	88312	88312
10	Խոհարարի օգնական	0.5	1	91275	45638
11	փականագործ-էլեկտրիկ	0.5	1	105000	52500
12	պահեստապետ	0.5	1	105000	52500
13	գործավար	0.25	1	106000	26500
14	լվացարար	0.25	1	105000	26250
15	դերձակ	0.25	1	105000	26250
16	դռնապան	1	1	88312	88312
17	հավաքարար	0.5	1	105000	52500
18	Օժանդակ բանվոր	0.5	1	105000	52500
19	Տնտեսվար	0.5	1	105000	52500
20	Պահակ	1	1	88312	88312
21	Դաստիարակ (այլընտրանքային նախադպրոցական կրթություն Քարաշեն և Խոզնավար բնակավայրերում)	2	4	91275	182550
	Ընդամենը	24.35	37	2129073	2446147

ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Դ. Ղուլունց

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 43-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 27-ի N 43-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Տեղ համայնքի ավագանու որոշման նախագիծը:

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Ներկայացվող նախագծի նպատակն է՝ ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Խոզնավար և Քարաշեն բնակավայրերում ներդնել այլընտրանքային մոդելով նախադպրոցական կրթական ծառայությունների մատուցում, այն է՝

- երեխաների ֆիզիկական, բարոյական և հոգեկան առողջության պահպանումը և ամրապնդումը,
- նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը,
- դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը,
- ընտանիքին սոցիալ-մանկավարժական աջակցության ցուցաբերումը,
- ՏԻՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների բարելավումը:

- **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Վերջին տարիներին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության հետևանքով Հայաստանի Հանրապետության նախադպրոցական համակարգը հայտնվել է անբարենպաստ պայմաններում, ինչի արդյունքում կրճատվել են նախադպրոցական հաստատությունների թիվը, գործող հաստատությունների կարողությունները, նվազել է դրանցում երեխաների ընդգրկվածությունը: Նախադպրոցական հաստատությունները համայնքային ենթակայության են

և դրանց գործունեության հետ կապված ցանկացած խնդիր անմիջականորեն աղերսվում է տվյալ համայնքի բյուջետային միջոցների հետ: Արդյունքում անհավասար պայմաններ են ստեղծվում նախադպրոցական տարիքի երեխաների միջև:

- **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախագծով առաջարկվում են ծախսարդյունավետ մոդելներ, որոնց ներդրման արդյունքում հնարավոր է ընդլայնել նախադպրոցական կրթության մեջ երեխաների ընդգրկվածությունը, ինչպես նաև արդյունավետ մեխանիզմներ կիրառել կառավարման մեջ:

2. Կարգավորման առարկան

ՀՀ Սյունիքի մարզի Տեղ բազմաբնակավայր համայնքում ձևավորվել այլընտրանքային նախադպրոցական կրթության ծառայության մատուցում, որոնք հնարավորություն կընձեռեն մեծացնել երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ծառայություններում և ապահովել մատչելիություն՝ հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար:

Այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայություն մատուցելով հնարավորություն է ընձեռնվում ցածր արժողությամբ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կառույց՝ նախադպրոցական հաստատություն չունեցող բնակավայրերում:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

- Այլընտրանքային մոդելի ներդրմամբ հնարավորություն է ստեղծվում համայնքին՝ այլընտրանքային եղանակով նախադպրոցական կրթության ծառայության մատուցումը՝ այն հասանելի դարձնելով Խոզնավար և Քարաշեն բնակավայրերի երեխաներին,
- Կստեղծվեն բարենպաստ պայմաններ երեխաների ժամանցն ապահովելու, նրանց կրթելու և դաստիարակելու համար,
- Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա մայրերին ոչ միայն աշխատել, այլ նաև որպես կին հասարակության մեջ կայանալ,
- Կստեղծվեն նոր աշխատատեղեր,

- Կկանխվի արտագաղթը, ինչի ռիսկը մեծացել է բնակավայրերի սահմանամերձ դառանալուց հետո:

Ծրագրի բյուջե՝

1. **Խոզնավար բնակավայր՝**

Պայմանագրի գինը՝ 11 749 500 ՀՀ դրամ, որից

- 5 000 000 ՀՀ դրամ Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանություն
- 2 000 000 ՀՀ դրամ- Համայնքի բյուջե
- 4 749 500 ՀՀ դրամ- ՅՈՒՆԻՍԵՖ

2. **Քարաշեն բնակավայր՝**

Պայմանագրի գինը՝ 9 579 000 ՀՀ դրամ, որից

- 957 900 ՀՀ դրամ- Համայնքի բյուջե
- 8 621 100 ՀՀ դրամ- ՅՈՒՆԻՍԵՖ

Համաձայն վերոգրյալի և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունների ներդրման նպատակով, <<Տեղի թիվ 1 նախադպրոցական հաստատություն>> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում նախատեսվում է հաստիքների քանակը ավելացնել 2-ով՝ դաստիարակի հաստիքներ՝ 0,5 հաստիքային միավորով, աշխատողների թիվը՝ ավելացնելով 4-ով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**